ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունվարի 2018 թվականի **թիվ 7** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման ձեւը, այն լրացնելու եւ ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը հաստատելու մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 33-րդ հոդվածի 5-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագման մասին նախնական որոշման ձեւը.

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման ձեւը լրացնելու եւ Եվրասիական

տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Կ. Մինասյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կոլեգիայի

2018 թվականի հունվարի 16-ի

թիվ 7 որոշմամբ

ՁԵՎ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք

ներմուծվող ապրանքների ծագման մասին նախնական որոշման

ՆԱԽՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին		
1. Նախնական որոշումը գրանցելու համարը		
2. Նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի անվանումը	3. Նախնական որոշման գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը	
4. Դիմումատուն	5. Գործարքի մասին տեղեկությունները	
6. Ապրանքների ծագումը որոշելու կանոնները	7. Ապրանքի ծագման հավաստագիրը	8. Վերիֆիկացման մասին նշումը
9. Ապրանքն արտադրողի մասին տեղեկությունները	10. Ապրանքի նկարագրությունը	
11. Ապրանքի ծագումը որոշելու չափանիշը	12. Ապրանքի ծագումը	
13. Ծառայողական նշումների համար		
14. Մաքսային մարմնի լիազորված անձը		

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2018 թվականի հունվարի 16-ի
թիվ 7 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման ձեւը լրացնելու եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 7 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի ծագման մասին նախնական որոշման (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, նախնական որոշում) ձեւը թղթային կրիչով փաստաթղթի տեսքով լրացնելու կանոնները եւ նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կանոնները:

2. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով նախնական որոշման կառուցվածքը եւ ձեւաչափը սահմանվում են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը համապատասխան, եթե նախնական որոշման՝ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ընդունումը նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Նախնական որոշման ձեւի մեջ նշման ենթակա են մեկ անուն ապրանքների մասին տեղեկությունները:

Սույն կարգի կիրառման նպատակով՝ որպես մեկ անուն ապրանքներ են դիտարկվում մեկ երկրից (երկրների խմբից, երկրների մաքսային միությունից, տարածաշրջանից կամ երկրի մասից) ծագող մեկ կոմերցիոն (ֆիրմային) անվանում ունեցող ապրանքները, որոնց համար տրվել է ապրանքի ծագման հավաստագիր:

Ապրանքի ծագման հավաստագրում մի քանի անուն ապրանքների մասին տեղեկություններ նշված լինելու դեպքում ապրանքի ծագման այդ հավաստագրում նշված յուրաքանչյուր անուն ապրանքի համար, որի առնչությամբ ներկայացվել է նախնական որոշում ընդունելու մասին դիմումը, լրացվում է նախնական որոշման առանձին ձեւ:

4. Նախնական որոշման ձեւը լրացնելիս կիրառվում են Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգի ռեսուրսների կազմի մեջ մտնող տեղեկատուներն ու դասակարգիչները, ինչպես նաեւ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ձեւավորվող եւ կիրառման ենթակա՝ մաքսային նպատակներով օգտագործվող տեղեկատուներն ու դասակարգիչները:

5. Նախնական որոշումը ձեւակերպվում է A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա՝ 2 օրինակից, որոնցից մեկը նախատեսված է նախնական որոշումն ընդունած՝ անդամ պետության մաքսային մարմնի (այսուհետ՝ մաքսային մարմին) համար, իսկ մյուսը՝ նախնական որոշումն ընդունելու մասին դիմում ներկայացրած անձի (այսուհետ՝ դիմումատու) համար:

6. Նախնական որոշման ձեւը լրացվում է տպիչ սարքերի օգտագործմամբ (բացառությամբ 14-րդ վանդակի), եւ այն չպետք է պարունակի ջնջումներ, շտկումներ եւ ուղղումներ:

7. Նախնական որոշման ձեւը լրացվում է ռուսերենով կամ այն անդամ պետության պետական լեզվով, որի մաքսային մարմինն ընդունում է նախնական որոշումը:

Եթե նախնական որոշում ընդունելու մասին դիմումին կցված փաստաթղթերում հանդիպում են լատինական այբուբենի տառերով գրված օտարերկրյա անձանց, ապրանքների եւ այլնի անվանումներ, ապա այդպիսի տեղեկությունները նախնական որոշման ձեւի մեջ նշվում են լատինական այբուբենի տառերով:

8. Այն դեպքում, երբ նախնական որոշման ձեւը լրացնելիս տեղեկություններ նշելու համար վանդակներում բավարար տեղ չկա, այդպիսի տեղեկությունները նշվում են նախնական որոշմանը նախապես կցված A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա, որոնք նախնական որոշման անբաժանելի մասն են կազմում (այսուհետ՝ լրացում): Ընդ որում, նախնական որոշման ձեւի համապատասխան վանդակում կատարվում է հետեւյալ նշումը՝ «Տե՛ս լրացումը»: Լրացման բոլոր թերթերը պետք է լինեն համարակալված:

Լրացման յուրաքանչյուր թերթի վրա նշվում են՝

վերին աջ անկյունում՝ «Նախնական որոշման լրացում թիվ_____ ___-րդ թերթի վրա».

նախնական որոշման ձեւի վանդակի համարը եւ այն տեղեկությունները, որոնց համար նախնական որոշման ձեւի վանդակում բավարար տեղ չկա:

Լրացման յուրաքանչյուր թերթ ստորին աջ անկյունում հաստատվում է ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կամ նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան լիազորված այլ պաշտոնատար անձի ստորագրությամբ (այսուհետ՝ մաքսային մարմնի լիազորված անձ), ինչպես նաեւ այդ մաքսային մարմնի կնիքի դրոշմվածքով:

Ռուսաստանի Դաշնությունում լրացման թերթերը կնիքի դրոշմվածքով չեն հաստատվում:

II. Նախնական որոշման ձեւը լրացնելը

9. 1-ին վանդակը՝ «Նախնական որոշման գրանցման համարը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է նախնական որոշման գրանցման համարը, որը ձեւավորվել է ըստ հետեւյալ սխեմայի՝

$$\frac{XX/}{1}\frac{XXXXXXXX/}{2}\frac{XXXXXX/}{3}\frac{XXXX/}{4}\frac{XX}{5}$$

որտեղ՝

1-ին տարրը՝ այն անդամ պետության ծածկագիրը, որի մաքսային մարմնի կողմից ընդունվում է նախնական որոշում՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2-րդ տարրը՝ նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի ծածկագիրը՝ անդամ պետությունում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան.

3-րդ տարրը՝ նախնական որոշումն ընդունելու ամսաթիվը՝ ՕՕԱԱՏՏ (օր, ամիս, օրացուցային տարվա վերջին 2 թվանշանները) ձեւաչափով.

4-րդ տարրը՝ նախնական որոշման՝ նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի կողմից տրված հերթական համարը (հաշվի առնելով, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում համընդգրկող համարակալումն սկսվում է 0001-ից).

5-րդ տարրը՝ «01» համարը:

10. 2-րդ վանդակը՝ «Նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի անվանումը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի լրիվ անվանումը:

11. 3-րդ վանդակը՝ «Նախնական որոշման գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է նախնական որոշման գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

12. 4-րդ վանդակը՝ «Դիմումատուն», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում առանձին տողերում նշվում են տեղեկություններ դիմումատուի մասին՝

անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձի եւ իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպության համար՝ լրիվ անվանումը, հարկային համարը եւ հասցեն (գտնվելու վայրը).

անդամ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) համար՝ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), հարկային համարը եւ հասցեն (բնակության վայրը).

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող եւ անդամ պետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), հարկային համարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության) եւ հասցեն (բնակության վայրը).

օտարերկրյա կազմակերպության համար՝ լրիվ անվանումը եւ հասցեն (գտնվելու վայրը).

օտարերկրյա ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում) եւ հասցեն (բնակության վայրը):

Դիմումատուի հասցեի վերաբերյալ տեղեկությունները նշվում են սույն կարգի 23-րդ կետին համապատասխան:

Դիմումատուի հարկային համարի վերաբերյալ տեղեկությունները նշվում են սույն կարգի 24-րդ կետին համապատասխան:

13. 5-րդ վանդակը՝ «Գործարքի մասին տեղեկությունները», լրացվում է ստորեւ նշված կարգով:

1-2 համարներով վանդակում նշվում են Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծումը նախատեսող գործարքի մասին տեղեկություններ՝

1-ին համարի տակ՝ այն գործարքի կատարումը հաստատող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը, որով նախատեսվում է Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծումը.

նոր տողից 2-րդ համարի տակ՝ դիմումատուի մոտ առկա առեւտրային փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը (հաշիվ-ապրանքագիր (ինվոյս) եւ հաշիվ-նախնական ձեւ (նախնական ձեւ-ինվոյս) եւ այլն) (տեղեկությունները նշվում են ստորակետով անջատված):

Եթե նախնական որոշում ընդունելու մասին դիմումի եւ (կամ) դրան կցված փաստաթղթերի մեջ այդպիսի տեղեկությունները բացակայում են (նախնական որոշում ընդունելու մասին դիմումը ներկայացնելու պահին այդպիսի գործարք չի եղել), ապա համապատասխան համարի տողում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

14. 6-րդ վանդակը՝ «Ապրանքների ծագումը որոշելու կանոնները», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում են միջազգային պայմանագրի կամ Միության մարմնի ակտի անվանումը եւ վավերապայմանները, որով սահմանվում են Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոնները, որոնց համապատասխան որոշվել է այն ապրանքի ծագումը, որի համար լրացվում է նախնական որոշման ձեւը:

15. 7-րդ վանդակը՝ «Ապրանքի ծագման հավաստագիրը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է ապրանքի ծագման այն հավաստագրի համարը եւ ամսաթիվը, որի հիման վրա ընդունվել է նախնական որոշումը, ինչպես նաեւ ապրանքի ծագման այդ հավաստագիրը տրամադրած լիազորված պետական մարմնի (լիազորված կազմակերպության) լրիվ անվանումը:

16. 8-րդ վանդակը՝ «Վերիֆիկացման մասին նշումը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում են ապրանքի ծագման այն հավաստագրի ստուգումը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի 5-րդ կետին եւ 314-րդ հոդվածին համապատասխան անցկացնելու մասին տեղեկությունները, որի հիման վրա լրացվում է նախնական որոշման ձեւը՝

այն դեպքում, երբ այդպիսի ստուգումն անցկացվել է մաքսային մարմնի կողմից, կատարվում է գրառում՝ «Անցկացվել է».

այն դեպքում, երբ մաքսային մարմնի կողմից այդպիսի ստուգում չի անցկացվել, կատարվում է գրառում՝ «Չի անցկացվել»:

17. 9-րդ վանդակը՝ «Ապրանքն արտադրողի մասին տեղեկությունները», լրացվում է ստորեւ նշված կարգով:

1-2 համարներով վանդակում նշվում են այն ապրանքն արտադրողի մասին տեղեկությունները, որի համար ընդունվում է նախնական որոշումը՝

1-ին համարի տակ՝ ապրանքն արտադրողի լրիվ անվանումը, հասցեն (կազմակերպության գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության վայրը) (տեղեկությունները նշվում են ստորակետով անջատված).

նոր տողից՝ 2-րդ համարի տակ՝ ապրանքի արտադրության վայրի հասցեն: Ապրանքն արտադրողի հասցեի եւ ապրանքի արտադրության վայրի հասցեի մասին տեղեկությունները նշվում են սույն կարգի 23-րդ կետին համապատասխան:

Եթե նախնական որոշում ընդունելու մասին դիմումի եւ (կամ) դրան կցված փաստաթղթերի մեջ այդպիսի տեղեկությունները բացակայում են, ապա համապատասխան համարի տողում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

18. 10-րդ վանդակը՝ «Ապրանքի նկարագրությունը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

1-5 համարներով վանդակում նշվում են այն ապրանքի մասին տեղեկությունները, որի համար ընդունվում է նախնական որոշումը՝

1-ին համարի տակ՝ ապրանքի լրիվ առեւտրային անվանումը, ապրանքի ֆիրմային անվանումը (ապրանքային նշանը) (տեղեկությունները նշվում են ստորակետով անջատված).

Նոր տողից՝ 2-րդ համարի տակ՝ ապրանքի հիմնական տեխնիկական եւ առեւտրային բնութագրերը՝ ֆունկցիոնալ նշանակություն, սորտ, մակնիշ, մոդել, ապրանքատեսակ (արտիկուլ), անհատական եւ տրանսպորտային փաթեթվածքի նկարագրություն (նշված տեղեկությունների կազմը որոշվում է ըստ այն ապրանքի կատեգորիայի, որի համար ընդունվում է նախնական որոշումը) (տեղեկությունները նշվում են ստորակետով անջատված).

Նոր տողից՝ 3-րդ համարի տակ՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի այն ծածկագիրը՝ ապրանքի ծագումը որոշելու չափանիշի կատարումն ստուգելու համար անհրաժեշտ նիշերի քանակությամբ, որը կիրառվել է նախնական որոշման ձեւի 6-րդ վանդակում նշված կանոններին համապատասխան ապրանքի ծագումը որոշելու համար՝ առնվազն առաջին 4 նիշերի մակարդակով:

Եթե նշված կանոններին համապատասխան ապրանքների ծագումը որոշելու համար կիրառված ապրանքի ծագումը որոշելու չափանիշը կապ չունի ապրանքի՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագրի մասին տեղեկությունների օգտագործման հետ, ապա դրվում է գծիկի նշանը՝ «-».

Նոր տողից՝ 4-րդ համարի տակ՝ ապրանքի ծագումը որոշելու չափանիշի կատարումն ստուգելու համար հաշվարկի ժամանակ օգտագործված այն ապրանքի արժեքը, որը կիրառվել է ապրանքի ծագումը՝ նախնական որոշման ձեւի 6-րդ վանդակում նշված կանոններին համապատասխան որոշելու համար:

Եթե նշված կանոններին համապատասխան ապրանքի ծագումը որոշելու համար կիրառված ապրանքի ծագումը որոշելու չափանիշը կապ չունի ապրանքի արժեքի մասին տեղեկությունների օգտագործման հետ, ապա դրվում է գծիկի նշանը՝ «-».

Նոր տողից՝ 5-րդ համարի տակ՝ ապրանքի մյուս բնութագրերը, որոնք կարեւոր են դրա ծագումը որոշելու համար եւ որոնք հետագայում կարող են օգտագործվել ապրանքի նույնականացման նպատակով (տեղեկությունները նշվում են ստորակետով անջատված):

19. 11-րդ վանդակը՝ «Ապրանքի ծագումը որոշելու չափանիշը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է ապրանքի ծագումը որոշելու չափանիշը, որը կիրառվել է նախնական որոշման ձեւի 6-րդ վանդակում նշված կանոններին համապատասխան ապրանքի ծագումը որոշելու համար:

Ապրանքի ծագումը որոշելու չափանիշը նշվում է ապրանքի ծագման հավաստագրի համապատասխան վանդակը լրացնելու՝ նշված կանոններով սահմանված կարգին համապատասխան:

Եթե ապրանքի ծագման հավաստագիրը լրացնելու կարգով չի նախատեսվում ապրանքի ծագման հավաստագրի համապատասխան վանդակի լրացում, ապա վանդակում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

20. 12-րդ վանդակը՝ «Ապրանքի ծագումը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է ապրանքի ծագման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի տարածաշրջանի կամ մասի) կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

21. 13-րդ վանդակը՝ «Ծառայողական նշումների համար», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում է լրացուցիչ տեղեկատվություն՝ մաքսային նպատակների համար (անհրաժեշտության դեպքում):

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 33-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ նախնական որոշման կրկնօրինակ տրամադրելու դեպքում վանդակում կատարվում է գրառում՝ «Կրկնօրինակ»:

22. 14-րդ վանդակը՝ «Մաքսային մարմնի լիազորված անձը», լրացվում է ստորեւ նշված կարգով:

Վանդակում նշվում են մաքսային մարմնի լիազորված անձի պաշտոնը, ազգանունը եւ անվան սկզբնատառերը, ինչպես նաեւ նախնական որոշումն ընդունելու ամսաթիվը:

Նախնական որոշման ձեւի մեջ նշված տեղեկությունները հաստատվում են վանդակի մեջ մաքսային մարմնի լիազորված անձի ստորագրությունը եւ նախնական որոշումն ընդունած մաքսային մարմնի կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով: Ռուսաստանի Դաշնությունում կնիքի դրոշմվածք չի դրվում:

23. Հասցեի մասին տեղեկությունները նշվում են նախնական որոշման ձեւի համապատասխան վանդակի առանձին տողի մեջ՝ ստորակետով անջատված, եւ ներառում են՝

1) երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2) վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը, նահանգը, գավառը եւ այլն).

3) բնակավայրը.

4) փողոցը (բուլվարը, պողոտան եւ այլն),

5) շենքի համարը.

6) մասնաշենքի (շինության) համարը.

7) բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը:

24. Դիմումատուի հարկային համար ասելով հասկանում ենք՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ).

Ղազախստանի Հանրապետությունում՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար.

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ)՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ Ղրղզստանի Հանրապետության տարածքում առեւտրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձի համար.

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ), եւ իրավաբանական անձի համար՝ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), որը նշվում է «/» բաժանման նշանը դնելու միջոցով (իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման համար նշվում է ՀԿՊԾ-ն, որը տրվել է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի):

III. Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելը

25. Մաքսային մարմնի կողմից ընդունված նախնական որոշման մեջ փոփոխությունները (լրացումները) կատարվում են՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 7-րդ կետերին ու սույն բաժնին համապատասխան:

26. Նախնական որոշման մեջ փոփոխությունները (լրացումները) կատարվում են մաքսային մարմինների կողմից անցկացված մաքսային հսկողության արդյունքներով, այդ թվում՝ հիմնավորված դիմումի հիման վրա, որը դիմումատուի կողմից ներկայացվել է մաքսային մարմին՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով (այսուհետ՝ դիմում):

27. Դիմումը ներկայացվում է այն մաքսային մարմին, որի կողմից ընդունվել է նախնական որոշումը, որի մեջ նախատեսվում է կատարել փոփոխություններ (լրացումներ):

Դիմումը ձեւակերպվում է ազատ ձեւով: Դիմումի մեջ նշվում են այն նախնական որոշման գրանցման համարը, որի մեջ նախատեսվում է կատարել փոփոխություններ (լրացումներ), դրանում կատարվող փոփոխությունների (լրացումների) ցանկը, այդպիսի փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության հիմնավորումը եւ դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

28. Դիմում ներկայացնելն ուղեկցվում է նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտությունը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի ձեւով փաստաթղթերը կամ թղթային կրիչով փաստաթղթերը ներկայացնելով: Թույլատրվում է ներկայացնել փաստաթղթերի պատճենները (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի թղթային պատճենները): Փաստաթղթերի ներկայացված պատճենները պետք է հաստատված լինեն դիմումատուի կողմից:

Այն դեպքում, երբ նախնական որոշման մեջ փոփոխությունները (լրացումները) կատարվում են այնպիսի վրիպակներ՝ ուղղագրական կամ քերականական սխալներ հայտնաբերելու պատճառով, որոնք չեն ազդում ապրանքի ծագման մասին տեղեկությունների վրա, նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտությունը հաստատող փաստաթղթերը կարող են չներկայացվել:

Մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների թարգմանությունը, որոնք կազմված են այն անդամ պետության պետական լեզու չհանդիսացող լեզվով, որի մաքսային մարմին է ներկայացվել դիմումը:

29. Դիմումը ներկայացնելու դեպքում մաքսային մարմինը գրանցում է այն՝ դիմումը տալու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրից ոչ ուշ, այդ թվում՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

30. Դիմումը եւ սույն կարգի 28-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրող մաքսային մարմինն իրականացնում է մաքսային հսկողություն՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 326-րդ հոդվածով սահմանված կարգով:

31. Եթե դիմումատուի կողմից ներկայացված տեղեկությունները բավարար չեն՝ փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար, ապա մաքսային մարմինը լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմումատուին է ուղարկում համապատասխան հարցում (այսուհետ՝ հարցում)՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվանից 10 աշխատանքային օրից ոչ ուշ: Այդպիսի հարցումն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով կամ գրավոր:

Գրավոր հարցումն ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ փոխանցվում է դիմումատուի կողմից այն ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող եղանակով: Ընդ որում, այդպիսի հարցման էլեկտրոնային ձեւը միաժամանակ ուղարկվում է դիմումատուի՝ դիմումի մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին (առկայության դեպքում):

Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է մաքսային մարմնի կողմից հարցումը գրանցելու օրվանից 30 աշխատանքային օրից ոչ ուշ:

32. Մաքսային մարմինը դիմումատուին մերժում է նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու հարցում՝ հետեւյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) չեն պահպանվել սույն կարգի 40-րդ կետի դրույթները.

բ) մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինը հայտնաբերել է տեղեկություններ, որոնք տարբերվում են դիմումի կամ սույն կարգի 28-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան՝ դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերի մեջ նշված տեղեկություններից.

գ) սահմանված ժամկետում չի ներկայացվել այն լրացուցիչ տեղեկատվությունը, որը հարցվել է մաքսային մարմնի կողմից սույն կարգի 31-րդ կետին համապատասխան, կամ ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը չի պարունակում փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտությունը հաստատող տեղեկություններ:

33. Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելը մերժելու համար սույն կարգի 32-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մաքսային մարմինը դիմումատուին է ուղարկում նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելը մերժելու մասին ծանուցումը՝ սույն կարգի 34-րդ կետով սահմանված ժամկետից ոչ ուշ: Այդպիսի ծանուցումն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով կամ գրավոր:

Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելը մերժելու մասին ծանուցումը գրավոր ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ փոխանցվում է դիմումատուի կողմից այն ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող եղանակով: Ընդ որում, այդպիսի ծանուցման էլեկտրոնային ձեւը միաժամանակ ուղարկվում է դիմումատուի՝ դիմումի մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին (առկայության դեպքում):

34. Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելը մերժելու համար սույն կարգի 32-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում մաքսային մարմինը՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվանից 30 օրացուցային օրից ոչ ուշ, ընդունում է որոշում՝ նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին:

Սույն կարգի 31-րդ կետին համապատասխան լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում սույն կետի առաջին պարբերության մեջ նշված ժամկետի ընթացքը կասեցվում է հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվանից եւ վերականգնվում է լրացուցիչ տեղեկատվությունը մաքսային մարմնի կողմից ստանալու օրվանից, իսկ այն դեպքում, երբ լրացուցիչ տեղեկատվությունը սահմանված ժամկետում չի ներկայացվել՝ սույն կարգի 31-րդ կետի երրորդ պարբերության մեջ նշված ժամկետը լրանալու օրվանից:

35. Եթե նախնական որոշման մեջ փոփոխությունները (լրացումները) կատարվում են մաքսային մարմնի կողմից ոչ թե դիմումի հիման վրա, այլ սեփական նախաձեռնությամբ անցկացված մաքսային հսկողության արդյունքներով, ապա մաքսային հսկողության արդյունքներով կազմված մաքսային փաստաթուղթը գրանցելու օրվանից 10 աշխատանքային օրից ոչ ուշ մաքսային մարմինն ընդունում է որոշում՝ նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին:

36. Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին որոշումն ընդունվում է նոր նախնական որոշում ընդունելու միջոցով:

Ընդ որում, նոր նախնական որոշման համապատասխան վանդակներ են տեղափոխվում նախնական որոշման մեջ նախկինում նշված բոլոր տեղեկությունները՝ հաշվի առնելով կատարվող փոփոխությունները (լրացումները):

37. Նոր նախնական որոշումն ընդունվում է թղթային կրիչով փաստաթղթի կամ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

38. Փոփոխություններ (լրացումներ) կատարելիս նոր նախնական որոշման վանդակները լրացվում են՝ հաշվի առնելով սույն կարգի 39-րդ կետով սահմանված առանձնահատկությունները:

39. Նոր նախնական որոշման մեջ նշվում են՝

1-ին վանդակում՝ նոր նախնական որոշման գրանցման համարը, որը ձեւավորվել է ըստ հետեւյալ սխեմայի՝

$$\frac{XX}{}/\frac{XXXXXXXX}{}/\frac{XXXXXX}{1}/\frac{XXXX}{}/\frac{XX}{2}$$

որտեղ՝

1-ին տարրը՝ այն նախնական որոշման գրանցման համարի առաջին 4 տարրերը, որի մեջ կատարվում են փոփոխությունները (լրացումները).

2-րդ տարրը՝ կատարվող փոփոխությունների (լրացումների) հերթական համարը՝ սկսած «02» համարից.

13-րդ վանդակում՝ նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու հիմնավորման մասին տեղեկությունները (օրինակ՝ դիմումի համարը (առակայության դեպքում) եւ ամսաթիվը, մաքսային հսկողության արդյունքներով կազմված մաքսային փաստաթղթի համարը եւ ամսաթիվը):

40. Փոփոխությունները (լրացումները) կատարվում են նախնական որոշման 2-13-րդ վանդակներում այնպիսի սխալներ հայտնաբերելու դեպքում, որոնք թույլ են տրվել այդ նախնական որոշումն ընդունելու ժամանակ եւ որոնք չեն ազդում ապրանքի ծագման մասին տեղեկությունների վրա:

Ընդ որում, նախնական որոշման 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ եւ 12-րդ վանդակների տեղեկությունները կարող են փոփոխվել (լրացվել)՝ դրանցում վրիպակներ, ուղղագրական կամ քերականական սխալներ հայտնաբերելու դեպքում, որոնց ուղղումից չեն փոփոխվում այն տեղեկությունները, որոնք ազդում են մաքսային մարմնի կողմից նախնական որոշման ընդունման վրա:

Նախնական որոշման 4-րդ վանդակում կատարվող փոփոխությունները (լրացումները) չեն կարող հանգեցնել այդ նախնական որոշումն ընդունելիս դիմումատու հանդիսացած անձի փոփոխմանը:

41. Թույլատրվում է, որ նոր նախնական որոշման 14-րդ վանդակում նշվող տեղեկությունները տարբերվեն այն նախնական որոշման 14-րդ վանդակում նշված տեղեկություններից, որի մեջ կատարվել են փոփոխությունները (լրացումները):

42. Նոր նախնական որոշումն ուժի մեջ է մտնում այն նախնական որոշումն ընդունելու օրվանից, որում կատարվում են փոփոխությունները (լրացումները):

43. Մաքսային մարմինը նոր նախնական որոշումն ընդունելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ դիմումատուին է ուղարկում նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին ծանուցումը՝ նշելով այդպիսի փոփոխություններ (լրացումներ) կատարելու պատճառները եւ կցելով նոր նախնական որոշումը: Այդպիսի ծանուցումն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով կամ գրավոր:

Նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին գրավոր ծանուցումն ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ փոխանցվում է դիմումատուի կողմից այն ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող եղանակով: Ընդ որում, այդպիսի ծանուցման էլեկտրոնային ձեւը միաժամանակ ուղարկվում է դիմումատուի՝ դիմումի մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին (առկայության դեպքում):